«ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԸՄԲՌՆՄԱՆ ՇՈՒՐՋ

ԽՈՍՐՈՎԱԴՈՒԽՏ ԱԶԱՏՅԱՆ

Քաղաքական մտքի պատմության ողջ ընթացքում տեսաբանների հետազոտությունների գլխավոր նպատակը եղել է կառավարման արդյունավետ ձևի, պետական կարգի իդեալական մոդելի հայտնաբերումը, ինչը թույլ կտար ներդաշնակեցնել մասնավորի և ընդհանուրի շահերը, ապահովել քաղաքացիների մասնակցությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին, նպաստել քաղաքական համակարգի կայուն գործառմանն ու շարունակական զարգացմանը: Հասարակական զարգացման տարբեր փուլերում կառավարման լավ կամ վատ ձևերի վերաբերյալ տեսակետները տարբեր են: Սակայն պատմական փորձը ցույց է տալիս, որ կառավարումը կարող է արդյունավետ համարվել միայն այն դեպքում, երբ այն կրողների իշխանությունը սահմանափակված է և վերահսկելի: Պատմականորեն գործադիր իշխանությունն օժտված է եղել հսկայական իրավասություններով: Դեռևս քաղաքական մտքի անտիկ տեսաբան Պլատոնը նշում էր. «Ես տեսնում եմ այն պետության մոտալուտ կործանումը, որտեղ օրենքն ուժ չունի և գտնվում է ինչ-որ մեկի իշխանության տակ, իսկ այնտեղ, որտեղ օրենքը կառավարողների տիրակալն է, իսկ նրանք՝ դրա ստրուկները, ես տեսնում եմ այդ պետության փրկությունը և բոլոր բարիքները, որոնք կարող են աստվածների կողմից շնորհվել պետություններին»[1]: Այս առումով անչափ կարևոր է խորհրդարանի՝ որպես գործադիր իշխանության իրավասությունների շրջանակը սահմանափակող կարևորագույն կենտրոնի դերը: Ընդ որում, այդ անհրաժեշտությունը ճանաչվել է դեռևս վաղուց: Այսպես, 1215 թ. քաղաքական պայքարի շնորհիվ բարոնները և հոգևորական բարձր դասը Անգլիայի թագավոր Հովհաննես Առաջին Անհողինին ստիպեցին ստորագրել «Ազատությունների մեծ խարտիան», որը փաստացիորեն սահմանափակեց կենտրոնական թագավորական իշխանության լիազորությունները: Ձևավորվեց ժամանակակից խորհրդարանի սաղմերից մեկը՝ «Թագավորական ընդհանուր խորհուրդը»: Առանց վերջինիս համաձայնության՝ թագավորը չէր կարող միջամտել խոշոր ֆեոդալների ներքին գործերին, հարկեր գանձել և այլն[2]:

Այսօր արդեն՝ ժողովրդավարացման երրորդ ալիքի պայմաններում, փաստ է, որ կառավարման ներկայացուցչական ձևը ամենատա-

---

[1] **Платон,** Государство. Соч. Том 3, ч. 2. М., 1972, с. 188-189.

[2] Տե՛ս **Штокмар В. В.** История Англии в Средние века. СПб., 2000, էջ 64:

բածվածն է աշխարհում, ինչը վկայում է դրա ունիվերսալ բնույթի մասին[3]: Ներկայումս կառավարման ներկայացուցչական համակարգը, չնայած իր բոլոր թերություններին, ժողովրդավարության կարևորագույն բնութագրիչներից է[4]: Սա է պատճառը, որ խորհրդարանի և պառլամենտարիզմի տեսության նկատմամբ մասնագիտական, գիտագործնական հետաքրքրությունն ավելի ու ավելի է աճում՝ քաղաքական գիտության հրամայականներից մեկը դարձնելով այդ հիմնահարցերի խորը ուսումնասիրությունը:

Պառլամենտարիզմը սոցիալ-քաղաքական և իրավաքաղաքական բարդ, բազմաչափ ֆենոմեն է: Այդ է պատճառը, որ այն ինչպես քաղաքագետների, այնպես էլ իրավագետների, պատմաբանների, սոցիոլոգների հետազոտման տիրույթում է: Շնորհիվ իր երկակի՝ իրավաքաղաքական բնույթի և բազմաշերտ բովանդակային կառուցվածքի՝ պառլամենտարիզմի էության վերաբերյալ գոյություն ունեն տարաբնույթ կարծիքներ: Ուստի զարմանալի չէ, որ գիտական գրականության մեջ չկա դրա սահմանման վերաբերյալ մեկ միասնական մոտեցում, իսկ վերջինիս ժամանակ շատ հաճախ ի հայտ են գալիս մեթոդաբանական բնույթի մի շարք խնդիրներ:

Ինչպես արդեն նշեցինք, պառլամենտարիզմը լայնորեն հետազոտվում է իրավագիտական հարացույցի շրջանակներում: Դրա այս կամ այն կողմին անդրադարձել են իրավունքի այնպիսի հայտնի տեսաբաններ, ինչպիսիք են Ն. Ա. Բոգդանովան[5], Պ. Ա. Աստաֆիչևը[6], Գ. Յելինեկը[7], Հ. Մեյերը[8] և այլք: Սակայն պետք է նշել, որ իրավագիտական գրականության մեջ ևս չկա դրա բնույթի վերաբերյալ միասնական տեսակետ: Այստեղ պառլամենտարիզմը հիմնականում դիտարկվում է որպես պետական կառավարման ձև, որի գոյությունն ու զարգացումը կապվում են հասարակության մեջ առկա այնպիսի ինստիտուցիոնալ բաղադրիչների հետ, ինչպիսիք են խորհրդարանը, իշխանությունների տարանջատման սկզբունքը, զսպումների և հակակշիռների համակարգը, կուսակցական համակարգը և այլն[9]: Այսինքն՝ պառլամենտա-

---

[3] Տե՛ս **Хантингтон С. П.** Третья волна. Демократизация в конце XX века. М., 2003, էջ 25:

[4] Տե՛ս **Lembcke O. W.** Theorie demokratischer Repräsentation, Bd 2: Wiesbaden: Springer VS, 2016, էջ 23-58:

[5] Տե՛ս **Богданова Н. А.** Парламентское право в системе конституционного права // "Парламентские процедуры: проблемы России и зарубежный опыт". М., 2003:

[6] Տե՛ս **Астафичев П. А.** Народное представительство и парламентаризм: конституционные проблемы. Орёл, 2004:

[7] Տե՛ս **Jellinek G.,** System der subjektiven öffentlichen Rechte, Akademische Verlagsbuchhandlung von J.C.B. Mohr (Paul Siebeck) Freiburg, 1892:

[8] Տե՛ս **Meyer H.,** Die Stellung der Parlamente in der Verfassungsordnung des Grundgesetzes // H.-P. Schneider, W. Zeh (Hrsg.), Parlamentsrecht und Parlamentspraxis in der Bundesrepublik Deutschland, Berlin, New York 1989:

[9] Տե՛ս **Сысолятина Е. Л.** Современный парламентаризм: институционально-правовая парадигма, էջ 28 http://ars-administrandi.com/article/Sysolyatina_2009_1.pdf, հասանելի՝ 24.02.2018:

րիզմը դիտարկվում է քաղաքական ինստիտուտների իրավական գործունեության պրիզմայով:

Ինչպես տեսնում ենք, իրավագետները ևս «պառլամենտարիզմ» երևույթը պարզաբանելիս չեն կարողանում այն դիտարկել քաղաքականությունից դուրս: Սա առաջին հերթին պայմանավորված է քաղաքականության և իրավունքի սերտ առնչությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ շատ հաճախ հենց քաղաքական իրողություններն են հանդես գալիս իրավանորմատիվային ամրագրումներ թելադրողի դերում: Այս տեսանկյունից ամբողջովին համամիտ ենք ռուս պետականագետ Ֆ. Կոկոշկինի հետ, որը նշում է, որ կառավարման խորհրդարանական կարգը մաքուր իրավագիտական կանոնների ամբողջություն չէ, այլ չափազանց բարդ, իրական քաղաքական կյանքի հրամայականներով թելադրված տարրերի համակարգ[10]: Պառլամենտարիզմի իրավագիտական սահմանման ժամանակ մենք բախվում ենք «պառլամենտարիզմ», «կառավարման ձև» և «խորհրդարանական կառավարման ձև» հասկացությունների պարզաբանման և հստակեցման խնդրին: Այս հասկացությունների փոխհարաբերակցությունը նման է ընդհանուրի և մասնավորի հարաբերակցությանը: «Պառլամենտարիզմ» հասկացությունը բովանդակային առումով ավելի լայն է և ներառում է ինչպես «կառավարման ձև», այնպես էլ «խորհրդարանական կառավարման ձև» հասկացությունները: Բանն այն է, որ պառլամենտարիզմը հավասարապես կարող է գոյություն ունենալ ինչպես միապետության, այնպես էլ հանրապետության պայմաններում, ուստի այն միայն խորհրդարանական կառավարման ձևի հետ նույնացնելը ճիշտ չէ: Այն ժողովրդական ներկայացուցչության ձև է, որի հիմքում ընկած է համամարդկային, համաժողովրդական արժեքների համակարգը, ինչը կոչված է ապահովելու բնակչության անուղղակի մասնակցությունը պետական կյանքի կարևորագույն որոշումների կայացմանը[11]:

Նախքան պառլամենտարիզմի քաղաքագիտական սահմանումներին անդրադառնալը հարկ ենք համարում ցույց տալ վերջինիս ներկայացուցչական բնույթը, ինչը թույլ կտա առավել խորը պատկերացում կազմել դրա վերաբերյալ: Պառլամենտարիզմի տեսության հիմքում ընկած են ժողովրդի ինքնիշխանության և իշխանության միակ աղբյուրը լինելու մասին գաղափարները: Դրա կայացումը պատմականորեն կապվում է ներկայացուցչական կառավարման ազատական սկզբունքի հետ: Ընդհանրապես պետության և իրավունքի տեսությանը հայտնի է ժողովրդի՝ իշխանության իրավունքի իրացման 2 հիմնական ուղի: Առաջինը ժողովրդի կողմից իշխանության իրականացման գործին ան-

[10] Տե՛ս **Горылев А. И.** Правовая природа современного парламентаризма // "Вестник Нижегородского государственного университета им. Н. И. Лобачевского". Выпуск 1 (5): 2002, էջ 110:

[11] Տե՛ս նույն տեղը, էջ 106:

միջականորեն մասնակցելն է, ինչը հնարավոր է ուղղակի դեմոկրատիայի պայմաններում: Երկրորդ ճանապարհը այդ իրավունքի փոխանցումն է իր իսկ կողմից ընտրված ներկայացուցիչներին:

Առաջին մոտեցման կողմնակիցներից է ֆրանսիական լուսավորության ամենաազդեցիկ ներկայացուցիչներից մեկը՝ Ժ.-Ժ. Ռուսոն: Ուղղակի դեմոկրատիան նա դիտում է որպես քաղաքական իդեալ: Ընդ որում, ըստ նրա տեսության, օրենսդիր իշխանությունը պետք է ուղղակիորեն պատկանի ժողովրդական ժողովին, որին պետք է մասնակցեն բոլոր քաղաքացիները: Իշխանության մնացած բոլոր մարմինները պետք է ենթարկվեն ժողովրդական ժողովին և պատասխանատու լինեն դրա առջև: Նա փաստորեն մերժում է ներկայացուցչական կառավարման ձևը և գտնում, որ պատգամավորները չեն կարող լինել ժողովրդի ներկայացուցիչները. նրանք սոսկ լիազորված անձինք են, որոնք վերջնական որոշումներ կայացնելու իրավունք չունեն: Հետևաբար օրենքը չի կարող օրենք համարվել, քանի դեռ ժողովուրդը ուղղակիորեն չի հաստատել այն[12]: Այնուամենայնիվ, ինչպես տեսնում ենք, լինելով ուղղակի դեմոկրատիայի անվիճելի կողմնակից, Ռուսոն չի մերժում այս կամ այն պետական որոշումը մշակելու համար ընտրության ճանապարհով ժողովրդի կողմից ձևավորված որոշակի մարմնի ստեղծման գաղափարը:

Իսկ ահա ըստ ներկայացուցչական դեմոկրատիայի կողմնակից անգլիացի լուսավորիչների՝ պետությունում միայն օրենսդիր իշխանությունը կարող է համարվել բարձրագույն: «Չէ՞ որ այն, ինչը մյուսների համար կարող է օրենքներ ստեղծել, անպայմանորեն նրանցից բարձր պետք է լինի: Օրենսդիր իշխանությունը պետք է բարձրագույն լինի, իսկ իշխանության մնացած ճյուղերը պետք է բխեն նրանից ու ենթարկվեն նրան»[13],- գրում էր իշխանությունների տարանջատման սկզբունքի հեղինակ Ջ. Լոկը: Նա առաջ էր քաշում խորհրդարանի՝ որպես «ողջ ազգի» ներկայացուցչական կառույց լինելու և օրենքներ ընդունելու բացառիկ իրավունք ունենալու մասին դրույթը: Օրենսդիր իշխանությունը, ըստ նրա, պետք է լիներ գերագույնը, իսկ մնացած բոլոր իշխանությունները՝ ի դեմս ինչ-որ անձանց կամ էլ հասարակության հատվածների՝ պետք է բխեին նրանից և ենթակա լինեին նրան:

Հետագայում իշխանությունների տարանջատման հայեցակարգը դարձավ պառլամենտարիզմի զարգացման տեսական հիմքերից մեկը: Այն առավել հարստացրին Թ. Հոբսը, Շ. Մոնտեսքյոն: Իշխանական լիազորությունները ժողովրդական ներկայացուցչության մարմնի խորհրդարանի ձեռքում կենտրոնացնելու մասին գաղափարը

---

[12] Տե՛ս **Руссо Ж. Ж.** Об общественном договоре. Трактаты. М.: "Канон-пресс Кучково поле", 1998, էջ 209-212:

[13] **Локк Дж.** Два трактата о правлении // Электронная библиотека Гражданское общество в Росии, с. 78 // https://www.civisbook.ru/files/File/Lokk_Traktaty_2.pdf, հասանելի՝ 12.02.2018:

զարգացրեց Շ. Մոնտեսքյոն: Նա, ինչպես և Ռուսոն, չէր մերժում օրենսդիր իշխանությունը ողջ ժողովրդին պատկանելու մասին գաղափարը: Սակայն, ի տարբերություն վերջինիս, նշում էր՝ քանի որ ժողովրդի կողմից իշխանության ուղղակի իրագործումը անհնար է մեծ պետություններում և դժվար՝ փոքրերում, ապա ի հայտ է գալիս ժողովրդական ներկայացուցչության կարիք: Ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչներն առավել լավ կարող են պետական հարցեր քննարկել և որոշումներ կայացնել[14]:

Շ. Մոնտեսքյոյի գաղափարները լայնորեն փոխ է առել ժամանակակից պառլամենտարիզմի տեսությունը: Օրինակ, ներկայացուցչական մարմինը պետք է ձևավորվի ըստ շրջանների, քանի որ որևէ տարածքում ուղղակիորեն ընտրված պատգամավորը առավել լավ կարող է արտահայտել սեփական տարածաշրջանի շահերը: Շ. Մոնտեսքյոն կատարելագործեց նաև Ջ. Լոկի՝ մարդկանց իրավահավասարության մասին գաղափարները, որոնք տեղ գտան համընդհանուր ընտրական իրավունքի գաղափարի մեջ: Իր «Օրենքների ոգու մասին» աշխատության մեջ նա հանդես էր գալիս Ֆրանսիայում բացարձակ միապետական վարչակարգի քննադատության դիրքերից: Որպես այլընտրանք նա առաջարկում էր միապետի ձեռքում կենտրոնացված լիազորությունները երեք ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական, առանձնացնելու առաջարկությամբ, որոնք կոչված էին հակակշիռ լինելու միմյանց[15]:

Այսօր քաղաքագիտական գրականության մեջ պառլամենտարիզմի երկու հիմնական ընկալում է առանձնացվում՝ լայն և նեղ: Լայն իմաստով պառլամենտարիզմը դիտվում է որպես տեսություն յուրաքանչյուր քաղաքական համակարգի մասին, որում կենտրոնական դիրք է գրավում խորհրդարանը: Նեղ իմաստով այն շատ հաճախ նույնացվում է և կապվում ժողովրդավարության հետ: Նման մոտեցման կողմնակիցներ են նաև ավստրիացի իրավագետ Հ. Քելզենը և ռուս իրավագետ Ե. Խուբները: Ըստ առաջինի՝ ժողովրդավարության գաղափարը կարող է իրականություն դառնալ միայն պառլամենտարիզմի պայմաններում[16]: Երկրորդի համաձայն՝ պառլամենտարիզմի մասին կարելի է խոսել միայն դեմոկրատական կառավարման համատեքստում[17]:

Գերմանացի հետազոտող Պ. Լյոշեն ևս պառլամենտարիզմը ներկայացնում է երկու տեսանկյունից՝ լայն և նեղ: Առաջինի դեպքում

---

[14] Տե՛ս **Монтескье Ш.** О духе законов // Электронная библиотека Гражданское общество в Росии, էջ 78 // https://www.civisbook.ru/files/File/Monteskye_O%20dukhe.pdf, հասանելի՝ 12.02.2018:

[15] Տե՛ս նույն տեղը:

[16] Տե՛ս **Kelsen H.** Verteidigung der Demokratie: Abhandlungen zur Demokratietheorie, ausgewält und herausgegeben von Matthias Jestaedt und Oliver Lepsius, Mohr Siebeck Tübingen, 2006, էջ 19:

[17] Տե՛ս **Хубнер Е.** Парламентаризм и представительная система // «Полис», 1992, №3, էջ 40-44:

այն կապվում է խորհրդարանական պառլամենտարիզմի հետ, որը հիմնված է որոշակի ինստիտուտների, հասարակական կառույցների և քաղաքական մշակույթի վրա: Նեղ սահմանմամբ պառլամենտարիզմ նշանակում է խորհրդարանի՝ որպես ժողովրդի շահերը արտահայտող կառույցի առկայություն[18]:

Վերլուծելով քաղաքագիտական գրականության մեջ պառլամենտարիզմի տեսության վերաբերյալ առկա հիմնական մոտեցումները՝ կարելի է առանձնացնել ծայրահեղական երկու դիրքորոշում:

Առաջին խմբի ներկայացուցիչները բացարձակացնում են խորհրդարանի դերը, գերարժևորում դրա ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա: Այս մոտեցման համաձայն՝ այնտեղ, որտեղ կա խորհրդարան, կա նաև պառլամենտարիզմ, և հակառակը՝ չկա պառլամենտարիզմ առանց խորհրդարանի: Ժամանակակից քաղաքական համակարգերում խորհրդարանի դերի կարևորության գնահատման այս մոտեցման համաձայն՝ պառլամենտարիզմը սահմանվում է բացառապես որպես բոլոր մնացած քաղաքական ինստիտուտների նկատմամբ խորհրդարանի գերակայություն: Պետական իշխանության մարմինների թվում խորհրդարանի խաղացած գերակա դերի մասին դրույթը առաջ է քաշում նաև Ի. Մ. Ստեպանովը: Ըստ նրա սահմանման՝ պառլամենտարիզմը պետական իշխանության իրականացման յուրահատուկ համակարգ է, որը կառուցվածքայնորեն և գործառութայնորեն հիմնված է իշխանությունների տարանջատման սկզբունքի, ինչպես նաև սոցիալական արդարության և իրավակարգի ամրագրման ու զարգացման նպատակների վրա՝ օրենքի գերակայության և խորհրդարանի գերակա դիրքի առկայության պայմաններում[19]: Այսինքն՝ ըստ այս սահմանման՝ օրենսդիր մարմինը հանդես է գալիս պետական կառավարման համակարգի կենտրոնական դերում, իսկ կառավարությունը, իրականացնելով գործադիր իշխանությունը, պարզապես պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև: Այս տեսակետի կողմնակից է նաև անգլիացի հետազոտող Ա. Դայսին: Նա գրում է. «Անգլիական պետական կառուցվածքում պառլամենտարիզմն իրավունք ունի ուժի մեջ դնելու և չեղարկելու ցանկացած օրենք: Չկա մի անձ կամ էլ կառույց, որի առջև անգլիական օրենքը կարող է ընկրկել: Խորհրդարանի իրավունքները սահմանափակված են լոկ 2 գործոններով՝ բարոյական նորմերով և հասարակական կարծիքով»[20]: Պ. Շլյախտունը պառլամենտարիզմը սահմանում է որպես քաղաքացիական հասարակության և պետության փոխազդեցության ձև, որը հիմնված է խորհրդարանի՝ օրենսդիր ներկայացուցչական մարմնի առաջնակարգ դերը ճա-

---

[18] Տե՛ս **Леше П.** Опыт парламентаризма в Германии // "Роль парламента в демократическом государстве": материалы науч.-практ. конф. Барнаул, 1999, էջ 53-59:

[19] Տե՛ս **Титов С. А.** История парламентаризма в Росии. М., 2015, էջ 88:

[20] **Дайси А.** Основы государственново права Англии. М., 1905, с. 445:

նաչելու վրա[21]: Ռ. Մ. Ռոմանովը գտնում է, որ պառլամենտարիզմը ծագում և գործում է այնտեղ, որտեղ խորհրդարանն օժտված է օրենքներ ընդունելու, կառավարություն ձևավորելու, վերջինիս և գործադիր իշխանության այլ մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասություններով[22]:

Փաստորեն մեթոդաբանական այս մոտեցման շրջանակներում պառլամենտարիզմը սահմանվում է որպես տեսական հայեցակարգ, որը զբաղվում է օրենսդիր իշխանության ուղղակի հետազոտմամբ: Ըստ այսմ՝ պառլամենտարիզմը հանդես է գալիս որպես ժողովրդի կողմից խորհրդարանի միջոցով իշխանության իրականացման գաղափարների և փորձի ամբողջություն: Ինչպես նշում է Օ. Ն. Բուլակովը, պառլամենտարիզմը տեսագաղափարական հայեցակարգ է, որը ծառայում է խորհրդարանի և դրա գործառույթների անհրաժեշտության գիտական հիմնավորմանը[23]:

Կարծում ենք, որ նման մոտեցումը փոքր-ինչ թերի է և միակողմանի, քանի որ այն անտեսում է պառլամենտարիզմի սոցիալ-մշակութաբանական կողմը և համալիր բնույթը: Ասել, որ որևէ երկրում խորհրդարանի առկայությունը նշանակում է նաև այնտեղ պառլամենտարիզմի առկայություն, ճիշտ չէ, քանի որ պառլամենտարիզմն ավելի լայն ֆենոմեն է, քան զուտ տեսություն խորհրդարանի և խորհրդարանական կառավարման ձևի մասին: Ինստիտուցիոնալ բաղադրիչների գոյությունը դեռևս չի ենթադրում տվյալ պետությունում և հասարակությունում պառլամենտարիզմի առկայություն: Այս առումով տեղին է բերել Բ. Ն. Չիչերինի սահմանումը, ըստ որի՝ խորհրդարանական կառավարումը ժողովրդի քաղաքական հասունության ճանաչումն է[24]:

Հետազոտողների երկրորդ խումբը վստահ է, որ պառլամենտարիզմի պայմաններում խորհրդարանը իշխանության մնացած մարմիններին համահավասար իրավասությունների է տիրապետում, քանի որ վերջիններիս վերահսկողական լիազորությունների շնորհիվ է գործառում ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր մարմինը: Այսպես, օրինակ, գերմանացի հետազոտող Գ. Յելինեկը թեպետ խորհրդարանը դիտում է որպես պառլամենտարիզմի միջուկ, սակայն այն չի դասում պետության կարևորագույն մարմինների թվին: Խորհրդարանը, ըստ նրա, այնպիսի երկրորդային մարմին է, որի ծագումը, գոյությունը և անհետացումը չեն կարող արմատական ազդեցություն ունենալ պետության բնականոն գործառության վրա[25]: Նման մոտեցման կողմնա-

---

[21] Տե՛ս **Шляхтун П. П.** Парламентаризм. Киев, 2003, էջ 76:

[22] Տե՛ս **Романов Р. М.** Парламентаризм: теория, история и современность. М., 2002. էջ 276:

[23] Տե՛ս **Булаков О. Н.** Двухпалатный парламент Российской Федерации. М.: «Юридический центр Пресс», 2003 // http://www.rumvi.com/products/ebook/... հասանելի՝ 12.01.2018:

[24] Տե՛ս **Чичерин Б. Н.** О народном представительстве. М., 1899. էջ 175:

[25] Տե՛ս **Jellinek G.,** System der subjektiven öffentlichen Rechte, Akademische Verlagsbuchhandlung von J.C.B. Mohr (Paul Siebeck) Freiburg, 1892, էջ 148-149:

կից է նաև Հ. Հակոբյանը: Վերջինս գտնում է. «Պառլամենտարիզմը լոկ ներկայացուցչական մարմնի՝ պառլամենտի առկայությունը կամ օրինաստեղծ աշխատանքի տեխնոլոգիան չէ»[26]: Ի. Վ. Գրանկինը նշում է, որ պառլամենտարիզմը պետական իշխանության մարմինների ձևավորման և կազմակերպման համակարգ է, որը հիմնված է իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքի վրա, ինչը երաշխավորում է իշխանության առանձին ճյուղերի անկախությունը և ինքնուրույնությունը: Այսինքն՝ պառլամենտարիզմի գլխավոր չափանիշը խորհրդարանի գերակայության սկզբունքը չէ, այլ այդ մարմնի ձևավորումն ու գործառությունը իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքի պայմաններում[27]:

Կարծում ենք, որ առավել նպատակահարմար է շեշտը դնել «պառլամենտարիզմ» ֆենոմենի համալիր բնույթի վրա՝ այն դիտարկելով գործող քաղաքական համակարգի ամբողջության լույսի ներքո, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների փոխկապվածության և փոխկախվածության համատեքստում: Նման չափավոր դիրքորոշում է արտահայտում ֆրանսիացի քաղաքագետ Գ. Բյուրդոն: Ըստ նրա՝ պառլամենտարիզմը հիմնված է 3 սկզբունքների՝ իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի հավասարության, դրանց միջև համագործակցության և միմյանց փոխվերահսկելու մեխանիզմների առկայության վրա: «Ո՛չ կառավարությունը, ո՛չ խորհրդարանը չպետք է օգտվեն անսահմանափակ լիազորություններից, դրանց հավասարակշռությունը պետք է երաշխավորվի հասարակական կարծիքի վերահսկողությամբ»[28],- գրում է նա: Պատահական չէ, որ խորհրդարանական համակարգը հաճախ սահմանվում է որպես հասարակական կարծիքի դրսևորում: Պառլամենտարիզմը իրական իրավաքաղաքական ֆենոմեն է, որը իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի համատեղ գործակցության մարմնավորողն է[29]:

Այս դեպքում, փաստորեն, պառլամենտարիզմը պետական իշխանության իրականացման մեթոդ է, որը երաշխավորում է իշխանության ճյուղերի իրական փոխզսպում և հակակշռում: Այս դիրքորոշման կրող է նաև սահմանադրական իրավունքի ռուս մասնագետ, ակադեմիկոս Օ. Ե. Կուտաֆինը: Ըստ նրա՝ պառլամենտարիզմը հասարակության կողմից պետության կառավարման յուրօրինակ համակարգ է, որին հատուկ է աշխատանքի բաժանումը օրենսդիր և գործադիր իշխանութ-

---

[26] **Հ. Հ. Հակոբյան,** Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2007, էջ 68-69:

[27] Տե՛ս **Гранкин И. В.** Парламент России // http://www.studmed.ru/view/grankin-iv-parlament-rossii_34751dc8bad.html, հասանելի՝ 20.02.2018:

[28] **Керимов А. А.** Современный парламентаризм: особенности и проблемы развития // "Изв. Иркутск . гос. ун-та". Сер.: «Политология. Религиоведение», 2015, Т. 11, с. 35.

[29] Տե՛ս **Борисовская Н. В.** Современный российский парламентаризм: эволюция взглядов и тенденции развития // "Известия Российского государственного педагогического университета им. А. И. Герцена", 2008, № 70, էջ 80:,

յունների միջև խորհրդարանի քաղաքական և գաղափարական դերի առկայության պայմաններում[30]:

Ինքնատիպ մոտեցում է առաջ քաշում ամերիկացի հետազոտող Ա. Ջենինգսը. նա նշում է, որ խորհրդարանի գործառույթը ոչ թե կառավարելն է, այլ քննադատելը: Այդ քննադատությունը ոչ միայն պետք է ուղղված լինի կառավարության քաղաքականության էական փոփոխմանը, այլև պիտի նպատակ հետապնդի ձևավորել հասարակական կարծիք: Խորհրդարանի գլխավոր գործառույթն այն է, որ այնտեղ հնչած ճառերը արձագանք գտնեն երկրում[31]: Ըստ էության, Ջենինգսն այս սահմանմամբ ցույց է տալիս խորհրդարանի կախվածությունը հասարակական կարծիքից: Նմանատիպ սահմանում է տալիս նաև Ս. Կարա-Մուրզան, համաձայն որի՝ խորհրդարանը ուղեղների համազգային ցուցահանդես է, քաղաքական փեսացուների տոնավաճառ, որի նպատակը քմահաճ հարսնացուի՝ ընտրելու իրավունք ունեցող հանրության բարեհաճությանը արժանանալն է[32]: Փաստորեն Ս. Կարա-Մուրզան մի կողմից ցույց է տալիս խորհրդարանի՝ հասարակության առջև պատասխանատու լինելու հանգամանքը, մյուս կողմից՝ ժողովրդի՝ քաղաքական գործընթացների վրա ազդեցություն ունենալու վճռորոշ դերը:

Պառլամենտարիզմի վերաբերյալ շատ հետաքրքրական սահմանում է տալիս Ա. Դ. Քերիմովը՝ շեշտը դնելով դրա գաղափարական-աշխարհայացքային տեսանկյան վրա: Ըստ նրա՝ պառլամենտարիզմը պետական մեխանիզմների գործառության վերաբերյալ համոզմունքների, մոտեցումների, արժեքային կողմնորոշումների համակարգ է[33]:

Այսպիսով, ուսումնասիրելով իրավագիտական և քաղաքագիտական գրականության մեջ պառլամենտարիզմի տեսության վերաբերյալ առկա հիմնական մոտեցումները, կարող ենք եզրակացնել.

- պառլամենտարիզմը տեսություն է, որի հետազոտման առանցքում խորհրդարանի և օրենսդիր իշխանության ուսումնասիրումն է իշխանությունների տարանջատման սկզբունքի, սոցիալական տարբեր շերտերի և խմբերի շահերի պաշտպանվածության, քաղաքական բազմակարծության, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանության պայմաններում,
- այն սոցիոմշակութային ֆենոմեն է, որը ներառում է տվյալ ժողովրդի քաղաքական մշակույթը, իրավագիտակցության աստիճանը, քաղաքական ներկայացուցչության ավանդույթները: Ցանկացած երկրում պառլամենտարիզմի զարգացման վրա հսկայական ազդեցություն

---

[30] Տե՛ս **Титов С. А.** История парламентаризма в Росии. М., 2015, էջ 88:

[31] Տե՛ս **Jennings I.** Cabinet Government. Cambridge: Cambridge University Press, 1959, էջ 472:

[32] Տե՛ս **Кара-Мурза С. Г.** Советская цивилизация (том I) // http://www.kara-murza.ru/books/sc_a/sc_a_content.htm, հասանելի՝ 12.02.2018:

[33] Տե՛ս **Керимов А. Д.** Понимание парламентаризма и перспективы его развития в России // "Гражданин и право", 2002, № 7-8:

են գործում տվյալ պետությանը հատուկ քաղաքական վարչակարգի յուրահատկությունները, հասարակության սոցիալ-պատմական զարգացածության աստիճանը,

- պառլամենտարիզմի գոյությունը պայմանավորված է ոչ այնքան պետական իշխանության մարմինների շարքում խորհրդարանի տեղի իրավանորմատիվային ամրագրմամբ, որքան հասարակության քաղաքական գիտակցության զարգացման աստիճանով,
- պառլամենտարիզմի գոյության կարևորագույն նախապայմաններ են իշխանությունների տարանջատման սկզբունքի, բազմակուսակցականության և բազմակարծության առկայությունը, պետական մարմինների ձևավորումը ազատ ընտրական համակարգի միջոցով. իրական պառլամենտարիզմ կարող է լինել միայն ազատ ընտրություններով ձևավորված, ժողովրդի կամքն արտահայտող ներկայացուցչական մարմնի գոյության պայմաններում:

Բանալի բառեր – *պառլամենտարիզմ, խորհրդարանական կառավարման ձև, խորհրդարան, ժողովրդական ներկայացուցչություն, իշխանությունների տարանջատման սկզբունք, քաղաքական մշակույթ*

ХОСРОВАДУХТ АЗАТЯН – *О восприятии понятия «парламентаризм».* – Статья посвящена изучению различных подходов к трактовке понятия парламентаризма. В частности, рассматриваются основные точки зрения на этот феномен в политической и юридической науке, что обусловлено его политико-правовой сущностью. Сопоставляются подходы различных авторов и тем самым подчёркивается сложность и многогранность явления. Раскрываются его теоретико-методологические основы, обосновывается значение факторов, влияющих на парламентаризм, таких, как политическая культура общества, степень его правосознания, традиции политического представительства.

Ключевые слова: *парламентаризм, парламентская форма правления, парламент, народное представительство, принцип разделения властей, политическая культура*

KHOSROVADUKHT AZATYAN – *On the Concept of Parliamentarism.* – The article is devoted to the study of various approaches to the interpretation of the concept of parliamentarism. In particular, the main points of view of the interpretation of this phenomenon are considered in political and juridical science, due to the political and juridical essence of this phenomenon. It should be noted, that the approaches of different authors are compared. The complexity and versatility of parliamentarism are underlined. The theoretical and methodological foundations of parliamentarism are revealed. It is shown that parliamentarism includes the political culture of this nation, the degree of legal consciousness, the traditions of political representation.

Key words: *parliamentarism, parliamentary form of government, parliament, public representation, the principle of the separation of powers, political culture*